

Մտածութեանս այդ տրամադրութիւնը կարելի է ձեւակերպել այսպէս. որեւէ զրի առնուած լեզու նոյն այդ լեզուի փոփոխման մի փուլն է, որ դարձած է կայուն. նոյն այդ լեզուի լուսանկարն է որոշ հասակում: Այդ փուլից առաջ լեզուն ապրած եւ փոփոխուած է դարեր շարունակ:

Մեր այսօրուան լեզուի մէջ այս կամ այն ձեւի տակ դեռ հնչում է մեր վայրենի նախահօր բարբառը, ինչպէս մեր այսօրուան նրբազոյն կերպարի մէջ արտփում է հին մարդու կոշտ հիւսուածքն արտադրող ճիգը: Բոլոր զրի առնուած լեզուների մէջ մենք հանդիպում ենք մեռնող, տիրական եւ նորածիլ ձեւեր, ինչպէս այս վայրկեանին մարդկային սերունդը կազմող բազմութեան մէջ հանդիպում ենք զառամածներ, առողջներ եւ նորածիններ:

Այս բարձունքից նայելով՝ լեզուն մեզ կ'երեւայ փարթամ մի ծառ, որի արմատները թաղուած են խորին եւ մթին անցեալում:

Բ.

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ՇԵՇՏԸ

Քերականները մեզ ասում են, որ հայոց լեզուի շեշտը վերջին վանկի վրայ է: Նրանց կարծիքով այս օրէնքը շատ քիչ բացառութիւն ունի:

«Հայերէն բառ մ'որ շեշտել պէտք ըլլայ, առհասարակ վերջին վանկն է շեշտ առնող», գրում է Հ. Ա. Այտընեան (Քերականութիւն հայկազեան լեզուի, 1885, էջ 501):

«Բառի շեշտ ունին բոլոր բառերը քիչ բացառութեամբ: Այս շեշտը գրաբարում գտնուած է բառի վերջին վանկի վրայ», գրում է Ս. Մալխասեան (գրաբարի հոլովումը, խոնարհումը եւ նախդիրները. 1891, էջ 6-8):

Ինչպէս տեսնում էք երկուսն էլ նոյն կարծիքն ունին մեր լեզուի շեշտադրութեան մասին. միայն Հ. Ա. Այտընեան կարծում է թէ առհասարակ ամէն մի հայ բառ շեշտն առնում է վերջին վանկի վրայ, իսկ Ս. Մալխասեան, ապրելով Կոփկաս, ժողովուրդի մէջ եւ տեսնելով թէ արեւելեան կենդանի լեզուն շեշտագրութեան տարբեր կարգ ունի՝ սահմանափակում է իր պնդումի ոլորտը եւ խօսում է միմիայն գրաբար լեզուի մասին:

Միջին տեղ է գրաւում Հ. Աճառեան՝ գրելով.

«Մինչդեռ հին հայերէնը եւ կը ճիւղին բոլոր քարբառները (այսինքն այն բարբառները, որ բայերի ներկայ ժամանակը կազմում են կը մասնիկով. կ'ըսեմ, կը տեսնեմ եւայլն Ն. Ա.) առանց բացառութեան՝ շեշտը վերջավանկին վրայ կը դնեն, երեւանի բարբառը վերջընթեր վանկին վրայ կը շեշտէ»¹⁾:

Ճիշդ է Հ. Աճառեանի դիտողութիւնը երեւանի բարբառի մասին, որով ինքնին հերքւում է Հ. Ա. Այտընեանի կարծիքը, որ իբր թէ «հայերէն բառ մ'որ շեշտել պէտք ըլլայ, առհասարակ վերջին վանկն է շեշտ առնող»:

Մենք տեսանք մի հայերէն մեծ բարբառ, որ շեշտը դնում է բառերի վերջընթեր վանկի վրայ: Ինչ վերաբերում է գրաբար լեզուին՝ Հ. Աճառեան նոյն կարծիքին է ինչ որ Հ. Ա. Այտընեան եւ Ս. Մալխասեան:

Թէ ի՞նչ հիման վրայ յիշեալ երեք դիտումները եւ շատ ուրիշներ — ինքնաբերաբար կամ իրար հետեւելով — կարծում են, որ գրաբար լեզուի շեշտն եղած է բառերի վերջին վանկի վրայ — յայտնի չէ: Որեւէ հիմք իրանք չեն բերում եւ մենք չգիտենք: Թւում է թէ սովորել ու տեսել են այդ շեշտադրութիւնը եւ բանաձեւել են սովորոյթը:

Գրաբարի շեշտադրութիւնը մի չքացած երեւոյթ է:

Թէ ինչպէս էին շեշտում բառերը Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ մենք չգիտենք: Այս մասին կարելի է միմիայն ենթադրութիւններ անել եւ դատողական ճամբով որեւէ եզրակացութեան դալ: Ա. Մէյէ եւ Ն. Մառ ընտրած են այս ճամբան:

Համեմատելով հայերէն բառերը հնդեւրոպական ուրիշ լեզուների բառերի, ինչպէս եւ նրանց ենթադրական նախաձեւերի հետ՝ Ա. Մէյէ նկատում է, որ հայոց բառերը մի վան-

1) Գիրքը որից քաղած եմ այս վկայութիւնը կող չունի, ուստի վերնադիրը դնել չեմ կարող. գիտեմ, որ էմինեան Ազգագրական ժողովածուի հատորներից մէկն է. բայց ո՞րը — չեմ կարող ասել: Տե՛ս էջ 40: